

## ԳՈՐԾԱՐՔԻ ԿՆՔՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

### ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑ, ՎԱՐԴՈՒՅԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

20-րդ դարի վերջը նշանավորվեց ինտերնետ համաշխարհային համակարգչային ցանցի ստեղծմամբ, որի շնորհիվ տեղեկատվության տարածման արագությունը զգալիորեն աճեց: Գործարարները, արագ արձագանքելով ինտերնետի բազմաթիվ առավելություններին, սկսեցին օգտագործել այն տնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով: Տեսությանը և պրակտիկային հայտնի բազմաթիվ գործարքներ արդեն իրականացվում են նաև ինտերնետի միջոցով, ու թեև ավանդական գործարարական գործունեության ժամանակ ծագող հարաբերությունների կանոնակարգման համար կիրառվող իրավաբանական մեխանիզմները կիրառելի են այս հարաբերությունների համար, այնուամենայնիվ ներկայումս որոշ դեպքերում առկա են իրավական բացեր, որոնք լրացնելու և իրավական դաշտը առավել հստակ դարձնելու համար անհրաժեշտ է առաջարկել ու գործարկել նոր մեխանիզմներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294 հոդվածը նախատեսում է գործարքի կնքման երկու ձև՝ բանավոր և գրավոր: Բանավոր գործարքը կնքված է համարվում նաև այն դեպքում, երբ անձի վարքից ակներև է գործարք կնքելու նրա կամքը: Օրենքը, փաստորեն, անձի վարքագծով դրսևավորած կամարտահայտությունը հավասարեցնում է բանավոր գործարքներին: Նման գործողությունները քաղաքացիական իրավունքի տեսության մեջ կոչվում են կոնկլյուզենտ<sup>1</sup>: Անհրաժեշտ է նկատել, որ գրավոր գործարքների կապակցությամբ օրենքը նախատեսում է դրանց հասարակ և որակյալ (նոտարական վավերացմամբ) ձևերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450 հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ պայմանագիրը կարող է կնքվել նախատեսված ցանկացած ձևով, եթե տվյալ տեսակի պայմանագիր կնքելու համար օրենքով սահմանված չէ որոշակի ձև: Պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով փաստաթղթեր փոխանակելու միջոցով. այն հնարավորություն է տալիս ճշգրիտ որոշելու, որ փաստաթուղթը ելնում է պայմանագրի կողմից: Գրավոր գործարքի հասկացությունը սահմանելիս նույն օրենսգրքի 296 հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

<sup>1</sup> Տե՛ս **Տ. Կ. Բարսեղյան**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Եր., 2004, էջ 189:

Սա նշանակում է, որ *օրենսդիրը էլեկտրոնային եղանակով կնքված պայմանագիրը հավասարեցնում է ավանդական փաստաթղթային ձևով կնքվող պայմանագրերին*:

Տեսաբանները գտնում են, որ էլեկտրոնային պայմանագրերը ավանդական պայմանագրերից տարբերակելու հիմնական չափանիշը էլեկտրոնային համապատասխան միջոցների օգտագործումն է<sup>2</sup>: Գրավոր կնքվող ավանդական պայմանագրերի համար համացանցը տվյալների փոխանցման միջոց է, իսկ ինտերնետով կնքվող գործարքների համար՝ դրանց իրականացման շուկա<sup>3</sup>: Հարկ է ընդգծել, որ այսպիսի դիրքորոշում են որդեգրել Միավորված ազգերի կազմակերպությունը, Եվրոպական միությունը և զարգացած պետությունները, որոնք առաջինն են կարգավորել այս ոլորտը: Կարծում ենք, որ այս մոտեցումը ձևավորվել է այն պատճառով, որ պետությունները և միջազգային կազմակերպությունները էլեկտրոնային միջոցներով կատարվող առևտրի համար խոչընդոտ ծառայող հանգամանքները վերացնելու նպատակով ժամանակին համապատասխան միջոցներ են ձեռնարկել հավաստիանալու, որ զուտ էլեկտրոնային լինելու պատճառով փաստաթուղթը չի զրկվի իրավական ուժից, կամ գործարքի կնքված լինելու հանգամանքը չի մերժվի: Միևնույն ժամանակ, դեռևս չունենալով ամբողջական և համալիր պատկերացում նոր ձևավորված երևույթի մասին, որն արագորեն փոխակերպվում և զարգանում էր՝ էլեկտրոնային միջոցներով փաստաթղթերի փոխանակումը հասարակ գրավոր փաստաթղթաշրջանառությանը հավասարեցնելը կարող էր համարվել հնարավոր ամենաարդյունավետ լուծումը, մինչև գործարար շրջանառությունը և ձևավորվող պրակտիկան կառաջադրեին իրենց պահանջները, կբացահայտեին թերությունները, ու ըստ այդմ՝ պետությունների կողմից հարցին կտրվեր նոր կարգավորում:

Այսպես, ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (այսուհետ՝ ՄԱԿՄԱԻՉ) 1996 թ. մշակած «էլեկտրոնային առևտրի մասին» մոնոլային օրենքի 5 հոդվածի համաձայն՝ *տեղեկությունը չի կարող զրկվել իրավական ուժից, վավերությունից կամ հայցային ուժից միայն այն հիմքով, որ այն ունի էլեկտրոնային փաստաթղթի ձև, իսկ 6 հոդվածի համաձայն այն դեպքում, երբ օրենքը պահանջում է, որ տեղեկատվությունը լինի գրավոր, այդ պահանջը կարող է բավարարվել էլեկտրոնային հաղորդագրությամբ, եթե դրանում ներառված տեղեկատվությունը հասանելի է հետագա հղման համար*: Հոդված 5-ով սահմանվում է մի կարևոր սկզբունք. էլեկտրոնային հաղորդագրությունը միայն էլեկտրոնային լինելու հիմքով չպետք է ենթարկվի խտրականության: Միևնույն ժամանակ, սակայն, դա չի նշանակում, որ էլեկտրոնային ցանկացած տեղեկություն պետք է ունենա իրավական ուժ<sup>4</sup>: Նմանատիպ ձևակերպում է տրված նաև «Միջազգային պայմանագրերում էլեկտրոնային հաղորդակցության կիրառման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 8 և 9 հոդվածներում: Ընդ որում, վերոնշյալ Կոնվենցիայի 8

<sup>2</sup> Տե՛ս **Васильева Н. М.** Правовое регулирование налогообложения электронной коммерции. М., 2007, էջ 44:

<sup>3</sup> Տե՛ս **Кузьмин И. Г.** Электронная торговля в России: экономическая эффективность, проблемы и перспективы развития. СПб., 2002, էջ 11:

<sup>4</sup> Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, United Nations Publications, New York, 1999, էջ 32:

հողվածի 2-րդ կետից հետևում է, որ չի պարտադրվում օգտագործել էլեկտրոնային հաղորդակցություն, սակայն կողմերի համաձայնությունն այդ մասին կարող է ենթադրվել նաև նրանց վարքագծից:

ԵՄ «Էլեկտրոնային առևտրի մասին» 2000/31/EC դիրեկտիվը<sup>5</sup> անդամ պետություններին հավաստիացրեց, որ նրանց իրավական համակարգը թույլ է տալիս պայմանագրերը կնքել էլեկտրոնային միջոցներով, ինչը նշանակում է, որ այն էլեկտրոնային պայմանագրերի կնքման խոչընդոտներ չի ստեղծում<sup>6</sup>:

Պարզելու համար, թե արդյոք էլեկտրոնային միջոցներով կնքվող պայմանագրերը պետք է ձևի առումով հավասարեցվեն գրավոր պայմանագրերին, անհրաժեշտ է ուսումնասիրել գրավոր փաստաթղթի գործառույթները, այդ թվում՝ դրա տակ դրվող ստորագրության նպատակները, ուստիև հասկանալ, թե ինչու են գործարքները կնքվում գրավոր, ինչպիսի երաշխիքներ է ձևը տալիս պայմանադիր կողմերին: Այնուհետև անհրաժեշտ է պարզել, թե արդյոք նույն գործառույթները կատարում են նաև էլեկտրոնային փաստաթուղթն ու ստորագրությունը, հետևաբար և՛ կարելի է արդյոք էլեկտրոնային միջոցներով կնքված պայմանագրերը հավասարազոր համարել գրավոր պայմանագրերին, թե անհրաժեշտ է դրանք տարբերակել ձևի տեսանկյունից:

Մասնագիտական գրականության մեջ հաճախ նշվում է, որ բանավոր կնքվում են այն գործարքները, որոնք արժանի չեն գրավոր ձևակերպվելու: Այդուհանդերձ, այս ընկալումը սխալ ենք համարում, քանի որ բանավոր գործարքը նույնքան պարտավորեցնող է, որքան գրավորը: Եվրոպական պայմանագրային իրավունքի սկզբունքներից (1998 թ.) և Մասնավոր իրավունքի ունիֆիկացման միջազգային ինստիտուտի (UNIDROIT) միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքներից (1994 թ.) հետևում է, որ պարտադիր չէ պայմանագիրը ձևակերպել գրավոր: Այն կարող է ապացուցվել ցանկացած միջոցներով՝ ներառյալ վկաների ցուցմունքներով<sup>7</sup>:

Ներկայումս որոշ տեսաբաններ գտնում են, որ մեր հասարակությունը վերադառնում է գրավոր ձևով ձևակերպվող գործարքներին: Գրականության մեջ նշվում է, որ սխալ կլինի ենթադրել, թե ձևականություններն այլևս կարևոր չեն ժամանակակից համակարգերում: Հակառակը, ձևական պահանջներ ներկայացվում են ամենուր, առաջին հերթին՝ սպառողների իրավունքների պաշտպանության նպատակով: Ձևական պահանջներին համապատասխան գործարքներ կազմելը խլում է ժամանակ և ջանքեր, հետևաբար՝ այդպիսիք կարող են արդարացված լինել միայն ողջամիտ պատճառներով: Նման պատճառ կարող է լինել գրավոր փաստաթղթի ապացուցողական ուժը: Կողմերն այդ կերպ կարող են խուսափել բազմաթիվ վեճերից: Երբեմն էլ ձևականությունները պահանջվում են ընդգծելու այն հանգամանքը, որ բանակցությունների փուլն ավարտվել է և վրա է հասել պայմանագրի ձևակերպման փուլը: Նախապայմանագրային բա-

<sup>5</sup> Տե՛ս <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:32000L0031:En:HTML> (մուտք՝ 01.10.2012 թ.):

<sup>6</sup> Տե՛ս **Jill Poole**. Contract Law. 10th edition, Oxford University Press, 2010, էջ 194-195:

<sup>7</sup> Տե՛ս **Ewan McKendrick**. Contract Law. Text, Cases and Materials. Fourth Edition, Oxford University Press, 2010, էջ 260-262:

նակցությունները հաճախ երկար են տևում, կողմերը պայմանագրային փուլ անցնելիս կարող են նորից համաձայնության չգալ այն պայմանների շուրջ, որոնց կապակցությամբ համաձայնվել էին նախկինում: Բանակցային շրջանում երկու կողմերն էլ գիտեն, որ բանակցությունների գրավոր ձևակերպումները պարտավորեցնող չեն, և չեն կարող վստահ լինել մյուս կողմի հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածության կապակցությամբ, քանի դեռ այն գրավոր չի ձևակերպվել<sup>8</sup>:

Տարբեր օրենսդրություններում գրավոր ձև ասելով հասկանում են նաև մեքենագիր, պատճենահանված, ֆոտո և բառերի այլ կերպ արտացոլման ու արտահայտման տեսանելի ցանկացած ձև<sup>9</sup>: Պայմանագրի գրավոր ձևի դեպքերում պայմանադիր կողմերի համար պետք է ակնհայտ լինեն պայմանագրի առարկան և պայմանները<sup>10</sup>:

*Ընդհանրացնելով կարելի է արձանագրել, որ պետությունների ազգային օրենսդրությունը պահանջում է գրավոր պայմանագիր հետևյալ պատճառներով՝*

1. վստահություն է ներշնչում առ այն, որ կողմերի մտադրության մասին առկա է շոշափելի ապացույց,

2. տեղեկացնում և զգուշացնում է կողմերին, որ պայմանագիրն առաջացնելու է հետևանքներ,

3. կողմերը վստահ են լինում, որ փաստաթղթային ձևակերպում ստացած պայմանագիրը մնալու է անփոփոխ,

4. հնարավորություն է ընձեռում փաստաթղթի պատճենը տրամադրելու կողմերին,

5. ապահովում է պայմանադիր կողմերի նույնականացումը նրանց կողմից կատարված ստորագրության միջոցով,

6. պարզեցնում և հեշտացնում է հաշվապահությունը, հարկային և այլ պարտականությունների կատարումը և այլն<sup>11</sup>:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը, և **ստորագրված է (ընդգծումը մերն է - Ա. Չ., Վ. Դ.)** գործարք կնքող անձի կամ անձանց, կամ նրանց՝ պատշաճ ձևով լիազորած անձանց կողմից:

Հարկ է ընդգծել, որ գրավոր փաստաթղթի ստորագրման պահանջը ներկայացվում է բոլոր իրավական համակարգերում, քանի որ ստորագրման հիմնական նպատակը հավաստիացումն է, որ անձը կողմ է գրավոր ձևակերպված փաստաթղթի բովանդակությանը և, որ ինքը տվյալ պայմանագրի կողմ հանդիսացող անձ է: Հակառակ պարագայում փաստաթղթի գրավոր ձևակերպումը կդառնա ոչ անհրաժեշտ և իմաստազուրկ:

Օրենքներում ընդհանրապես ստորագրության հասկացությունը չի սահմանվում, պարզապես նշվում է, որ փաստաթուղթը պետք է ստորա-

<sup>8</sup> Տե՛ս Ewan McKendrick, նշվ. աշխ., էջ 263:

<sup>9</sup> Տե՛ս E-commerce and Convergence, A guide to the Law of Digital Media. Fourth Edition, editor Mike Butler, Great Britain, 2011, էջ 183-184:

<sup>10</sup> Տե՛ս Davidson, Knowles and Forsythe, Business Law, Principles and Cases in The Legal Environment, Fifth Edition, USA, 1996, էջ 315:

<sup>11</sup> Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, նշվ. աշխ., էջ 35:

գրվի<sup>12</sup>: Ստորագրության հիմնական գործառույթներն են անձի նույնակա-  
նացումը, ճշգրտության ապահովումն առ այն, որ անձն ինքն է ստորա-  
գրում տեքստը, այսինքն՝ անձին տվյալ փաստաթղթի բովանդակության  
հետ կապելը: Ստորագրությունը նույնականացնում է կողմերին՝ ելնելով  
այն առանձնահատուկ նշաններից, որոնք պայմանավորված են յուրա-  
քանչյուրի ձեռագրով<sup>13</sup>: Պետք է նշել, որ ավանդական ձեռագիր ստորա-  
գրությունից բացի, առկա են ստորագրության այլ տիպեր ևս (օրինակ՝  
կնքում կամ կնիքի վրա առկա ստորագրություն), որոնք ապահովում են  
ճշգրտության տարբեր նակարդակներ<sup>14</sup>: Ստորագրությունը նաև ստորա-  
գրողի՝ պայմանագիր կնքելու առնչությամբ կամքի արտահայտությունն է:  
Ստորագրությունն ապահովում է փաստաթղթի իսկությունը<sup>15</sup>:

Քննարկելով գրավոր փաստաթղթերի և ձեռագիր ստորագրություննե-  
րի գործառույթներն ու առանձնահատկությունները՝ անհրաժեշտություն է  
առաջանում այդ առնչությամբ վեր հանել էլեկտրոնային փաստաթղթի և է-  
լեկտրոնային ստորագրության առանձնահատկությունները:

«Էլեկտրոնային փաստաթուղթ կամ տեղեկություն» արտահայտու-  
թյան կապակցությամբ տարբեր մոտեցումներ են առկա: «Էլեկտրոնային  
առևտրի մասին» ՄԱԿՄԱԻՅ-ի նմուշային օրենքի 2 հոդվածի համաձայն՝  
*էլեկտրոնային հաղորդագրությունը տեղեկություն է, որը ձևակերպվել է,  
ուղարկվել, ստացվել կամ պահպանվում է որևէ էլեկտրոնային, օպտիկա-  
կան կամ նմանատիպ միջոցներով սակայն չսահմանափակելով* տվյալ-  
ների էլեկտրոնային փոխանակումը, էլեկտրոնային փոստը, հեռագիրը,  
տելեքսը կամ ֆաքսը: «Էլեկտրոնային գործարքների մասին» ԱՄՆ օրեն-  
քում պարզաբանվում է «էլեկտրոնային գրառում» հասկացությունը, այն է՝  
ցանկացած գրառում, որը ստեղծվել, ուղարկվել, ստացվել կամ պահպան-  
վում է էլեկտրոնային միջոցների օգնությամբ: «Էլեկտրոնային փաստաթղ-  
թի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ԴԴ օրենքի 2 հոդվա-  
ծում տրվում է էլեկտրոնային փաստաթղթի սահմանումը, համաձայն որի՝  
էլեկտրոնային փաստաթուղթը էլեկտրոնային ձևով ներկայացված տեղե-  
կություն կամ հաղորդագրություն է:

Տեսաբանները էլեկտրոնային փաստաթղթերի կիրառությունը քննադա-  
տում են երեք հիմնական պատճառներով՝ ֆիզիկապես ոչ շոշափելի լինելու  
պատճառով, դրանք ստորագրած անձի նույնականացման դժվարությամբ և  
բովանդակությունը փոփոխելու հնարավորությամբ<sup>16</sup>: Կարծում ենք, որ ա-  
ռաջին առարկությունն անհիմն է, քանի որ էլեկտրոնային փաստաթղթերը  
կարող են պահպանվել շատ ավելի երկար, քան թղթայինները, բացի այդ,  
դրանք կարող են արտատպվել թղթային կրիչի վրա, և այսպիսի մոտեցումը  
պարզապես հոգեբանական ավանդական մոտեցում է տեխնոլոգիական նոր  
լուծումների նկատմամբ:

<sup>12</sup> Տե՛ս Paul Todd. E-commerce Law. Cavendish Publishing Limited, 2005, էջ 121:

<sup>13</sup> Տե՛ս I. Twomeu, D. Jennings, M. Fox, Andersons's Business Law and the Legal Envi-  
ronment, 18th edition, US, 2002, էջ 301:

<sup>14</sup> Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactement, նշվ.  
աշխ., էջ 37, նաև՝ UNCITRAL, Promoting confidence in electronic commerce: legal issues on  
international use of electronic authentication and signature methods. Vienna, 2009, էջ 5:

<sup>15</sup> Տե՛ս Martien Schaub. European Legal Aspects of E-commerce. Amsterdam, 2004, էջ 129:

<sup>16</sup> Տե՛ս Кацев Я. А. Электронные документы и сообщения в коммерческом обороте:  
правовое регулирование. М., 2006, էջ 10:

Ինչ վերաբերում է մյուս երկու փաստարկներին, ապա դրանք էլեկտրոնային առևտրի հիմնական խոչընդոտներից են, սակայն տեխնոլոգիական զարգացումն արդեն իսկ ապահովել է դրանց լուծման հնարավոր տարբերակներ, որոնք ժամանակի ընթացքում ավելի են կատարելագործվում:

Կողմերի նույնականացման միջոց է էլեկտրոնային ստորագրությունը, որի շնորհիվ հնարավորինս ապահովվում են կնքվող գործարքների հուսալիությունն ու էլեկտրոնային շրջանառության կայունությունը: Միևնույն ժամանակ հարկ է ընդգծել, որ էլեկտրոնային ստորագրությունների միջոցով հնարավոր է լինում նաև որոշել, թե հաղորդագրությունը հետագայում արդյոք ենթարկվել է փոփոխության:

Հաղորդագրությունը ստորագրելու համար ստորագրողն առաջին հերթին նշում է փաստաթղթի այն սահմանները, որոնք պետք է ստորագրվեն, այնուհետև սեղմում է համակարգչում տեղադրված ֆունկցիան, որից հետո ծրագիրը հաղորդագրությունը դարձնում է ստորագրելու համար պատրաստ, որն էլ այնուհետև վերափոխվում է թվային ստորագրության: Այդ ստորագրությունը կցվում է հաղորդագրությանը և ուղարկվում ստացողին: Ստորագրությունը ստուգելու համար ստացողը պետք է օգտագործի այն նույն ծրագիրը, որով հաղորդագրությունը կոդավորվել է. ծրագիրը հաղորդագրությունը կվերափոխի սկզբնական ընթեռնելի տեքստի: Այսինքն՝ թե՛ ուղարկողը, թե՛ ստացողը պետք է օգտագործեն նույն ծրագիրը (այլ կերպ ասած՝ շիֆրը), որն օգտագործվել է տեքստը կոդավորելիս<sup>17</sup>: Ստորագրությունը ստուգելիս ծրագիրն այն համարում է թույլատրելի, եթե հաղորդագրությունն անփոփոխ է<sup>18</sup>:

Անդրադառնալով էլեկտրոնային ստորագրության իրավական կարգավորմանը և դրա հիմնական գործառնություններին՝ հարկ է արձանագրել, որ ընդունված ցանկացած ակտում առաջին հերթին ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ փաստաթուղթը կամ ստորագրությունը չպետք է զրկվի իրավական ուժից միայն այն հիմքով, որ էլեկտրոնային է:

ԵՄ-ում էլեկտրոնային ստորագրությունները ճանաչվել են ընդունելի «էլեկտրոնային ստորագրությունների մասին» ԵՄ 1999/93/EC դիրեկտիվով: Էլեկտրոնային ստորագրություններին դրանով տրվել է ձեռքով կատարվող ստորագրությանը հավասար իրավական ուժ: ԱՄՆ-ում էլեկտրոնային առևտուրը կարգավորող օրենսդրության միասնականությունն ապահովելու համար ընդունվել է երկու՝ 1999 թ.՝ Միասնական էլեկտրոնային գործարքների ակտը և 2000 թ.՝ «Համաշխարհային և ազգային առևտրում էլեկտրոնային ստորագրությունների մասին» ակտեր: Այս օրենքներում նշվում է, որ էլեկտրոնային ստորագրությունը չի կարող զրկվել իրավական ուժից միայն այն պատճառով, որ կատարվել է էլեկտրոնային եղանակով, ընդ որում՝ օրենքը առավելություն չի տալիս էլեկտրոնային ձևերից որևէ մեկին<sup>19</sup>: Պետք է հավելել, որ էլեկտրոնային ստորագրությունների համարժեքությունը ճանաչվել է նաև Չինաստանում և Կորեա-

<sup>17</sup> Տե՛ս Козье Д. Электронная коммерция. М., 1999, էջ 65:

<sup>18</sup> Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Signatures with Guide to Enactment, Գլ. աշխ., էջ 23-24:

<sup>19</sup> Տե՛ս I. Twomeu, D. Jennings, M. Fox, Գլ. աշխ., էջ 302:

յում<sup>20</sup>: Կանադայի օրենսդրությունը վկայի կողմից իր դատավարական պարտականությունների կատարումը հնարավոր է համարում էլեկտրոնային ստորագրությամբ<sup>21</sup>:

Ըստ «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի՝ էլեկտրոնային թվային ստորագրություն է համարվում էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիստոգրաֆիական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանագրերի եզակի հաջորդականությունը, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար: Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Այստեղից հետևում է, որ էլեկտրոնային ստորագրությունները, հատկապես էլեկտրոնային թվային ստորագրությունը, թույլ են տալիս հստակորեն որոշելու, թե փաստաթուղթն ունի կողմից է ստորագրված, և հետագայում այն փոփոխվել է, թե՞ ոչ, ինչի շնորհիվ փաստորեն լուծվում է էլեկտրոնային առևտրաշրջանառությունում անձի նույնականացման խնդիրը:

Այսպիսով, գրավոր փաստաթղթերի և ձեռագիր ստորագրությունների, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային ստորագրությունների նպատակների, գործառույթների վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ էլեկտրոնային պայմանագրերը սկզբունքորեն չեն տարբերվում թղթային կրիչի վրա կնքված պայմանագրերից: Պետք է համաձայնել ամերիկյան այն հետազոտողների հետ, որոնք նշում են, որ գործարքի տեսակը որոշվում է նրա առարկայով, այլ ոչ թե կնքման ձևով, հետևաբար էլեկտրոնային պայմանագիրը պայմանագրի առանձին տեսակ չէ<sup>22</sup>: Էլեկտրոնային միջոցներով պայմանագրերի կնքումը որևէ կերպ չի հանգեցնում պայմանագրի բովանդակային էության փոփոխության (օրինակ՝ առուծախի կամ ցանկացած այլ քաղաքացիաիրավական պայմանագրի դեպքում պայմանագրի հասկացությունն ու էությունը բովանդակային տեսանկյունից չեն փոխվում): Գրավոր և էլեկտրոնային փաստաթղթերի կապակցությամբ կա-

<sup>20</sup> Տե՛ս **Minyan Wang**. The Impact of Information Technology Development on the Legal Concept – A Particular Examination on the Legal concept of Signatures. International Journal of Law and Information Technology, Volume 15, 2007, էջ 8:

<sup>21</sup> Տե՛ս Electronic Transactions Act and Digital Signature Act: Background, Major Provisions and Implication, OECD Forum on Electronic Commerce. Paris, 12-13 October, 1999, էջ 5:

<sup>22</sup> Տե՛ս **Donnie, L. Kidd, Jr. and Daightrey W.** Adapting Contract Law to Accommodate Electronic Contracts//Rutgers Computer and Technology Law Journal. Vol. 26, էջ 269:

տարված վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ էլեկտրոնային փաստաթղթերն առնվազն կատարում են գրավոր փաստաթղթի գործառնությունները: Ինչ վերաբերում է էլեկտրոնային ստորագրություններին, ապա դրանք առավել հուսալի տեսակների օգտագործման պարագայում ապահովում են հուսալիության բարձր մակարդակ և ապացուցելի են դարձնում փաստաթղթի փոփոխված լինելը, կազմման ժամանակը, թույլ են տալիս հայտնաբերելու հեղինակին, ինչը հաճախ անհնար է կամ մոտավոր արդյունքներ է տալիս գրավոր փաստաթղթերի պարագայում: Ընդ որում, էլեկտրոնային փաստաթղթերն ունեն մեկ առավելություն ևս. դրանք կոնկրետ անհատին պատկանելու, ստորագրվելու, փոփոխության ենթարկված լինելու հանգամանքները որևէ ձեռագրաբանական կամ այլ տեսակի փորձաքննության չեն ենթարկվում: Ավելին, թվային ստորագրությունների սերտիֆիկատները հաճախ օգտագործվում են սերվերներն ու կայքերը, համակարգչային ծրագրերը նույնականացնելու համար (օրինակ՝ երաշխավորելու կայքից ներբեռնված ծրագիրը)<sup>23</sup>: Գտնում ենք, որ պետական քաղաքականության կազմակերպման տեսանկյունից էլեկտրոնային առևտրի տարածման սկզբնական շրջանում արդարացված է եղել պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից որդեգրված այն մոտեցումը, որ էլեկտրոնային փաստաթղթերը չպետք է զրկվեն իրավական ուժից զուտ էլեկտրոնային լինելու հանգամանքով պայմանավորված, և որ դրանք պետք է ընդունվեն որպես գրավոր ձևին հավասար իրավական ուժ ունեցող: Հարկ է ընդգծել, որ շատ հաճախ այսպիսի մոտեցումը թույլ է տվել խուսափելու բազմաթիվ օրենսդրական փոփոխություններից, քանի որ միայն մեկ կողմի ֆիկացված կամ որևէ այլ իրավական ակտում այն հանգամանքի ամրագումը, որ գրավոր ձևի պահանջը պահպանված կհամարվի նաև այն դեպքում, երբ փաստաթուղթը ստացվել է էլեկտրոնային եղանակով, արդեն իսկ բավարար է եղել մնացած ակտերում նման կարգավորումն ապահովելու համար: Ավելին, այս մոտեցումը նաև արդարացված է այն հանգամանքով, որ տեխնոլոգիական տեսանկյունից և էլեկտրոնային շուկայի անկանխատեսելի զարգացումների պարագայում էլեկտրոնային առևտուրն ու պայմանագրերը գտնվել են զարգացման ցածր աստիճանում, և այդ պահին խնդրի վերաբերյալ ամբողջական պատկերացում չունենալու պատճառով հստակ կարգավորիչ լուծումներ տալը կարող էր հանգեցնել հակառակ արդյունքների, այն է՝ դրանց զարգացմանը խոչընդոտելուն:

Թեև գտնում ենք, որ պետությունների որդեգրած քաղաքականությունը մինչ այժմ արդարացրել է իրեն, այդուհանդերձ, մեր կարծիքով, էլեկտրոնային հաղորդագրությունների յուրահատկությունն արդեն իսկ թույլ է տալիս խոսել տեղեկություն ներկայացնելու նոր՝ **էլեկտրոնային ձևի** մասին: Էլեկտրոնային հաղորդագրությունները, անկասկած, տեղեկատվության ներկայացման յուրահատուկ ֆիզիկական ձև են: Գիշտ է, կողմերի միջև հարաբերությունների բնույթն ու բովանդակությունը չեն փոխվում էլեկտրոնային ձևով կնքվելիս, բայց և այնպես այս նոր ձևը պահանջում է նոր կարգավորման նախատեսում, որը պետք է վերաբերի էլեկտրոնային փաստա-

<sup>23</sup> Տե՛ս UNCITRAL, Promoting confidence in electronic commerce: legal issues on international use of electronic authentication and signature methods, նշվ. աշխ., էջ 19-20:



թղթերի ապացուցողական ուժին, կողմերի միջև պայմանագրային պարտավորությունների առկայությանը, պայմանագրերի կնքման մասին կանոններին և այլն<sup>24</sup>։ Հարկ է ընդգծել, որ էլեկտրոնային ձևով կնքված պայմանագրերն ունեն իրենց առանձնահատկությունները օֆերտայի և ակցեպտի, պայմանագիրը կնքված համարելու պահի, վեճերի պարագայում միջազգային մասնավոր իրավունքի նորմերի կիրառման ոլորտներում, և հենց այդ առանձնահատկություններն են, որ թույլ են տալիս խոսել պայմանագրերի ձևակերպման մեկ այլ` էլեկտրոնային ձևի մասին։ Էլեկտրոնային ձևը պարտավորությունների ձևակերպման առավել կատարելագործված միջոց է, ընդ որում, եթե գրավոր ձևը բանավոր ձևի համեմատ ավելի հուսալի է, ապա էլեկտրոնային ձևը (առայժմ թվային ստորագրության առկայության պարագայում միայն) գերազանցում է գրավորին մի շարք չափորոշիչներով։ Ուստի գտնում ենք, որ *Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային միջոցներով կնքվող պայմանագրերի կարգավորում նախատեսելու համար անհրաժեշտ է ընդունել «Էլեկտրոնային առևտրի մասին» կամ նման այլ օրենք*, որը, ինչպես այլ երկրների փորձն է ցույց տալիս, պետք է կրկին անդրադառնա էլեկտրոնային փաստաթղթին և ստորագրությանը, օֆերտա և ակցեպտ ստանալու ժամանակ ծագող և քաղաքացիաիրավական ընդհանուր բնույթ ունեցող այլ հարաբերություններին։ Կարծում ենք, որ նման մոտեցումը կծանրաբեռնի օրենսդրությունը. գործարքի կնքման ձևը, դրանով պայմանավորված` առանձին պայմանագրերի առանձնահատկությունները իրենց կարևորության ուժով կարգավորվում են հենց քաղաքացիական օրենսգրքով, ուստի այս պարագայում ևս միասնական իրավական դաշտ ապահովելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարել մի շարք փոփոխություններ։ Առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքում բանավոր և գրավոր ձևերի հետ միասին նախատեսել նաև գործարքների ձևակերպման էլեկտրոնային ձևը։ Ընդ որում, քաղաքացիական օրենսգրքով կարող են տրվել նաև ներկայումս «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքով կարգավորվող էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության սահմանումները։

Հարկ է ընդգծել, որ մեր հարևան երկրների և Ռուսաստանի օրենսդրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ռուսաստանն ու Թուրքիան ունեն միայն էլեկտրոնային ստորագրության մասին օրենք, իսկ էլեկտրոնային ձևը հավասարեցվում է գրավոր ձևին, սակայն առանձնահատուկ կարգավորումը բացակայում է։ Վրաստանում բացակայում է անգամ էլեկտրոնային ստորագրության մասին օրենքը, իսկ Իրանն ու Ադրբեջանը միակն են տարածաշրջանում, որ ընդունել են էլեկտրոնային առևտրի մասին առանձին օրենքներ, որոնք կարգավորում են գործարք կնքելու էլեկտրոնային ձևով պայմանավորված մի շարք առանձնահատկություններ։

Ինչ վերաբերում է եվրոպական երկրներին, ապա դրանց մեծ մասում առանձնահատուկ կարգավորումը բացակայում է։ Բացառություն են կազմում Գերմանիան և Ֆրանսիան։ Այսպես, Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգիրքը պայմանագրերի և պարտավորությունների վերաբերյալ ընդ-

<sup>24</sup> Տե՛ս «Актуальные проблемы гражданского права». Выпуск 4-й. М., 2002, т. 308:

հանուր դրույթներում էլեկտրոնային ձևով կնքվող պայմանագրերին հատկացրել է առանձին գլուխ, որում անդրադարձել է օֆերտայի և ակցեպտի առանձնահատկություններին և մի շարք այլ հարցերի<sup>25</sup>: Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ԵՄ «Էլեկտրոնային առևտրի մասին» 2000/31/EC դիրեկտիվը՝ 2004 թ. Ֆրանսիան ընդունել է «Թվային տնտեսության մասին» օրենքը: Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա վերջինիս քաղաքացիական օրենսգրքի 126ա սեկցիան անդրադառնում է պայմանագրերի կնքման էլեկտրոնային ձևին, ըստ որի՝ *եթե էլեկտրոնային ձևը պետք է փոխարինի գրավոր ձևին, ապա նման հայտարարություն անողը հաղորդագրության վերջում պետք է նշի իր անունը և ապահովի էլեկտրոնային փաստաթղթին կից համապատասխան էլեկտրոնային ստորագրություն, որը կհամապատասխանի «Էլեկտրոնային ստորագրությունների մասին» ակտին: Պայմանագրի դեպքում կողմերից յուրաքանչյուրը մյուս կողմին պետք է տրամադրի իր էլեկտրոնային ստորագրությունը<sup>26</sup>:*

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք քննարկել ՀՀ քաղաքացիական օրենսդրությունում հետևյալ փոփոխություններ և լրացումներ կատարելու հնարավորությունը.

ա) օրենսգրքի 294 հոդվածի (գործարքի ձևերը) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«Գործարքները կնքվում են բանավոր, գրավոր կամ **էլեկտրոնային** ձևով: Գրավոր և էլեկտրոնային ձևով կնքվող գործարքները կարող են լինել հասարակ կամ նոտարական վավերացում պահանջող:*

*Օրենսգրքի հետագա նորմերում առանձին տեսակի գործարքներին ներկայացվող գրավոր ձևը պահպանելու պահանջը հավասարապես վերաբերում է էլեկտրոնային ձևին»:*

բ) Օրենսգրքի 296 հոդվածի (գրավոր գործարք) 3-րդ մասից հանել «էլեկտրոնային թվային ստորագրությամբ» արտահայտությունը և օրենսգրքում ավելացնել 296<sup>1</sup> նոր հոդված՝ հետևյալ վերտառությամբ և բովանդակությամբ.

*«Հոդված 296<sup>1</sup>. Էլեկտրոնային գործարք.*

*1. Էլեկտրոնային գործարքը պետք է կնքվի **էլեկտրոնային փաստաթուղթ կազմելու միջոցով**, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կողմից կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից՝ «**էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին**» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:*

*Երկկողմ (բազմակողմ) գործարքները կարող են կնքվել սույն օրենսգրքի 450 հոդվածի 5-րդ կետով նախատեսված եղանակներով:*

*2. Օրենքով, այլ իրավական ակտերով և կողմերի համաձայնությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ, որոնց պետք է համապատասխանի գործարքի էլեկտրոնային ձևը (որոշակի ձևաթղթի վրա կնքելը, էլեկտրոնային կնիքով դրոշմված լինելը և այլն), և կարող են նախատես-*

<sup>25</sup> Տե՛ս [www.legifrance.gouv.fr/affichCode.do?cidTexte=LEGITEXT000006070721&dateTexte=20060406](http://www.legifrance.gouv.fr/affichCode.do?cidTexte=LEGITEXT000006070721&dateTexte=20060406), (մուտք՝ 10.12.2012):

<sup>26</sup> Տե՛ս [www.gesetze-im-internet.de/englisch\\_bgb/englisch\\_bgb.html#p0369](http://www.gesetze-im-internet.de/englisch_bgb/englisch_bgb.html#p0369) (մուտք՝ 10.12.2012):

վել այդ պահանջները չպահպանելու հետևանքներ: Եթե նման հետևանքներ նախատեսված չեն, ապա կիրառվում են գործարքի հասարակ՝ գրավոր ձևը չպահպանելու հետևանքները (298 հոդվածի 1-ին կետ):

**3. Էլեկտրոնային գործարքների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 297-302-րդ հոդվածների կանոնները, եթե օրենքով կամ այլ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ»:**

զ) Օրենսգրքի 450 հոդվածի (պայմանագրի ձևը) 3-րդ մասից պետք է հանել «էլեկտրոնային կամ» բառերը, և նույն հոդվածում ավելացնել 5-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

**«5. Էլեկտրոնային պայմանագրերը կարող են կնքվել նաև՝ պայմանագրի էական պայմանները ներառող օֆերտային համաձայնվելու նպատակով էլեկտրոնային համապատասխան կոճակը սեղմելով, կամ էլեկտրոնային ցանկացած այլ ձևով, որով կդրսևորվի պայմանագրի մեկ կողմի համաձայնությունը մյուս կողմի առաջարկած պայմաններին»:**

Կարծում ենք, որ նման կարգավորման պարագայում նոտարական վավերացման կամ իրավունքների պետական գրանցման մասին ընդհանուր դրույթները պետք է պահպանեն իրենց ուժը և հավասարապես տարածվեն էլեկտրոնային ձևով կնքվող գործարքների վրա: Պարզապես դրանցում պետք է դրույթ ավելացնել, որով հնարավորություն կընձեռվի նոտարական վավերացումն ու իրավունքների պետական գրանցումն իրականացնել նաև էլեկտրոնային ձևով, առավել ևս, որ ներկայումս թե՛ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, թե՛ նոտարներն անցում են կատարում էլեկտրոնային համակարգի, ինչն էլ, որոշակի ընթացակարգային կանոնների պահպանմամբ, հնարավորություն կընձեռի պայմանագրի կողմերին գործարքները վավերացնել և դրանցից ծագող իրավունքները պետական գրանցման ենթարկել էլեկտրոնային եղանակով՝ առանց ավելորդ թրթաբանության:

**АРМЕН АЙКЯНЦ, ВАРДУИ ДАНИЕЛЯН – Об электронной форме заключения сделки.** – В статье анализируются характерные особенности сделок, заключаемых в электронном и письменном виде, сравниваются функции письменных и электронных документов и подписей. Причём особенности электронного варианта позволяют сделать вывод о новой форме заключения сделок и предложить внести в Гражданский кодекс РА положение, регулирующее сделки, заключаемые в электронной форме.

**ARMEN HAYKYANC, VARDUHY DANIELYAN – Electronic Form as a Separate Form of Settling Bargains.** – The characteristic features of transactions made in electronic and written forms are discussed in the presented article. While comparing functions of written and electronic documents and signatures, the authors conclude that peculiarities of electronic form of transactions give grounds to consider a new form of bargains. They suggest discussing the possibility of foreseeing a new provision regulating transactions made in the electronic form in the RA Civil Code.